

նիոյ մէջ: 2<sup>0</sup> Առաջի Գիրայեան մը, նաւապետ կամ նաւավար, որուն նաւուն անունն էր Մասուննա Տէրրա փայե (Աստուածամայր խաղաղութեան): Ասոնք հաւանարար միւսնոյն ընտանիքէն էին:

Մեր այս պատմական մէջբերումներով աւելի կը զօրանայ արժէքը Քէրէկի հայ գաղթականութեան, որ արժանացած էր Կիլիկեան հայ թագաւորաց հովանաւորութեան եւ խնամոց: Քէրէկի հայերէ ոմանք Ջուղայի, Երուսաղէմի կողմերը և այլուր տեղափոխուելով երևելի հանդիսանալնին կ'ապացուցանէ թէ ծագմամբ Կիլիկեցի նոյն ժողովուրդը իր մէջ կը պահէր կենսունակութիւն մը, որով կարողացաւ ան դիմադրելու անհղ մորիկներու եւ երկար դարեր պահեց իր գոյութիւնը, եւ անոնց բեկորները՝ որ Քէրէքէն թէև յարդի ունդի նման հողմավար եղան, բայց զացած տեղերնին արմատ բռնեցին և ունճացան, Գերաք Աղան իր յիշատակներովը զմայելի օրինակ մ'է այգիսիներուն:

Գրուածքիս խմբագրութեան համար, բաց ի վերոյգրեալ աղբիւրներէն, օգտուած ենք նաև հետեւեալ գիրքերէն.

Dictionnaire de la Bible, par F. Vigouroux, 1904, Paris տե՛ս բառն Kir Moab, էջ 1895-1906:

Guide du Nil au Jourdain. etc. par Meistirmann. Paris. 1909, տե՛ս էջ, 252-259. Քէրաքի մասին:



## Է

### Հ Ո Վ Ո Ւ Ա Ն Ո Ց Ի Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

#### 1. Հովուանոցի եկեղեցւոյն վերաբերեալ ազգային յիշատակութիւններ.

Բեթղեհէմէն կէս ժամ հեռի, դէպի արևելք, Պէյթ-Սահուր գիւղին մօտ կը գտնուի այս եկեղեցին, որ ձօնուած է յիշատակին այն հովուաց՝ որոնց աւետեց հրեշտակը Յիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը, ըստ Աւետարանի: Երուսաղէմի հայ միաբանու-